ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԵԿՕՐՅԱ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

22.01.2018 16:20

Շիրակի մարզի փաստաբաններս միանալով ՀՀ դատական օրենսգրքի նախագծով դատարանի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանքի կիրառում նախատեսող իրավակարգավորման վերաբերյալ մեր գործընկերների կողմից տարածված հայտարարությանը, տեղեկացնում ենք, որ նույնպես որպես նախազգուշական քայլ, մեկ օրյա բողոքի ակցիա ենք իրականացնելու՝ այդ օրը հրաժարվելով Շիրակի մարզում պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

Մեր վստահորդները գիտակցում են, որ այս պայքարն իրենց արդար դատաքննության իրավունքի համար է, քանի որ ճնշված փաստաբանը չի կարող դատարանում արդյունավետ պաշտպանություն ապահովել:

Կոչ ենք անում ՀՀ Ազգային ժողովին՝ հաշվի առնել փաստաբանների տեսակետը:
Բողոքի ակցիան տեղի կունենա 2018 թվականի հունվարի 24-ին:

Շիրակի մարզի փաստաբանների ներկայացուցիչ (համակարգող)՝
փաստաբան Հայկ Հարությունյան

Առաջարկվող նորություններ

17.01.2018 ԲԱԶՄԱԹԻՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՊԱՀԱՆՋ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

18.01.2018 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՀՂԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

18.01.2018 ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է 907 ՓԱՍՏԱԲԱՆ

19.01.2018 ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է 1110 ՓԱՍՏԱԲԱՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })